Գառնու տաճար

Գառնու ամրոցն ու հնավայրը գտնվում է Կոտայքի մարզի համանուն գյուղում, Ազատ գետի աջ ափին։
Ըստ XIVդ. մի ձեռագրի՝ հիմնադրվել է մ.թ.ա. 2166թ.-ին։ Ըստ Մ. Խորենացու՝ Գառնու հիմնադրումը վերագրվում է Հայկ Նահապետի ծոռ Գեղամին, որի թոռան՝Գառնիկի անունով էլ, իբրև, կոչվել է Գառնի։
Գառնու հնագիտական պեղումների ժամանակ հայտնաբերվել է մ.թ.ա. III հազարամյակի 2-րդ կեսի վաղ բրոնզեդարյան բնակավայր՝ բոլորակ և քառանկյունի հատակագիծ ունեցող կացարաններով և օջախներով։ : Հայտնաբերվել են նաև միջին և ուշ բրոնզեդարյան (մ.թ.ա. II հազարամյակ) դամբարաններ և հնագիտական նյութեր, ուրարտական և վաղ հայկական (մ.թ.ա. VI-IVդդ.) խեցեղեն և Արգիշտի թագավորի սեպագիր արձանագրությունը, որի մեջ Գառնին իր շրջակայքով անվանված է Գիառնիյան երկիր։

Ամրոցը կառուցվել է հավանաբար մ.թ.ա. IIդ.: Մ.թ. Iդ. կեսերին այն ավերել են հռոմեական զորքերը: Iդ. 70-ական թթ. Գառնին վերականգնել է Տրդատ Ա թագավորը, որի թողած հունարեն արձանագրությունում այն անվանված է «անառիկ ամրոց»: Արտաշեսյան և Արշակունյաց թագավորների օրոք Գառնին եղել է նշանավոր ամրոց, զորակայան և ամառանոց, իսկ IVդ. եպիսկոպոսանիստ բնակավայր:
Ամրոցի շինությունների կոմպոզիցիոն կենտրոնը կազմել է սյունազարդ տաճարը, որից արևմուտք բարձրացել է պալատական շենքի խոշոր կառուցվածքը:

Բաղնիքի շենքը բաղկացած է միևնույն ուղղությամբ, միմյանց հաջորդող չորս սենյակներից՝ բաղնիքի նախասրահ հանդերձարանից, սառը, գոլ և տաք ջրերի լոգասենյակներից: Հյուսիս-արևմտյան հատվածում գտնվել է ջրամբարը, հարավ-արևմտյան մասի հատակի տակ՝ կրակարանը ջուր տաքացնելու համար: Գիտական-գեղարվեստական մեծ հետաքրքրություն է ներկայացնում հանդերձարանի խճանկարը, որը նախաքրիստոնեական Հայաստանի մոնումենտալ գեղանկարչության հուշարձաններից է:

Խճանկարի վրա պատկերված է ծով, ուր ներկայացված են տարբեր աստվածություններ, ջրահարսներ (ներեիդներ), իխտիոկենտավրներ՝ ձիու իրանով ձկան վերջավորությամբ մարդիկ, ձկնորս, բազմապիսի ձկներ և այլն: Պատկերներում կան ծովի հետ կապված զանազան արտահայտություններ («Ծովի խորք», «Ծովային անդորր» և այլն) ու աստվածների անուններ (Գլավկոս, Թետիս, Էրոս և այլն): Խճանկարի կենտրոնում պատկերված են տղամարդու ու կնոջ կիսանդրիներ, վերը գրված է «ոչինչ չստանալով աշխատեցինք» արտահայտությունը: Խճանկարը պատրաստված է 15 գույնի բնական քարերից, իսկ սյուժեն, իրականացման տեխնիկան, ոճային ու գունային առանձնահատկությունները, ինչպես և բաղնիքի շինության կառուցվածքը հիմք են տվել ամբողջ հուշարձանը համարելու IIIդ. գործ:

Հեթանոսական տաճարը կառուցվել է Իդ. 2-րդ կեսին՝ ամրոցի վերակառուցման շրջանում (77թ.)։ Քրիստոնեական կրոնի ընդունումից հետո այն եղել է Տրդատ Գ թագավորի քրոջ՝ Խոսրովդուխտի ամառանոցային սենյակը։ Ենթադրվում է, որ տաճարը նվիրված է եղել արևի աստված Միհրին։ Միհրը, իբրև լույսի, ճշմարտության խորհրդանիշ, հաճախակի պատկերվել է ցուլի (խավարի) դեմ մենամարտելիս։ Տաճարի մոտ գտնվել է սպիտակ մարմարից քանդակված ցուլի կճղակ, որը պատկանել է քրիստոնեական կրոնի տարածման ժամանակ ոչնչացված հեթանոսական կուռքին։

2011թ. Գառնու պատմամշակութային համալիրն արժանացել է Մելինա Մերկուրիի անվան ՅՈՒՆԵՍԿՕ-Հունաստան 2011 մրցանակին։

Գառնու տաճարից ոչ հեռու է գտնվում «Քարերի սիմֆոնիա» կամ «Բազալտե երգեհոն» կոչվող բնական հուշարձանը, որը ներկայանում է հսկա հնգանկյուն և վեցանկյուն բազալտե սյուներով (մոտ 50մ բարձրության): Վերջիններս զարմանալի սիմետրիկության պատճառով ձեռագործ են թվում: